ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Սովետական Միության բոլոր ազգերի հետ միասին հայ ժողովուրդը հանդիսավորությամբ տոնելով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակը, վերհիշում է իր անցած ուղին, վերլուծում անցյալի իրադարձությունները, կշռադատում այն մեծ պայքարի նշանակությունը, որին ակտիվորեն մասնակցել է ինքը, չխնայելով իր զավակների ուժերը, արյունը և կյանքը։

Հայ ժողովուրդը արթուն և զգաստ ունկնդրեց 1917 թ. հոկտեմբերին Ռուսաստանում հաղթանակած հեղափոխության ձայնին, ողջունեց հեղափոխությունը և պայքարի ելավ սովետական նոր կարգի հաղթանակի համար։ Նա Հոկտեմբերյան հեղափոխությանը տվեց լավագույն զինվորներ, որոնցով իրավունք ունի հպարտանալու։ Այդ զինվորները հանդես եկան հեղափոխության գլխավոր օջախներում՝ Պետրոգրադում և Մոսկվայում, ռուսական բանակի գլխավոր զորակայանում և ռազմաճակատներում, նահանգական և մարզային կենտրոններում՝ Մինսկում և Բաքվում, Ռոստովում և Կրասնոդարում, Սիմֆերոպոլում և Աստրախանում, Տաշքենդում և Սամարգանդում։

Հոկտեմբերյան հեղափոխության օրրան Պետրոգրադում ծավալված հեղափոխական մեծ իրադարձությունների մեջ Հայաստանի զավակները աչքի ընկնող դեր կատարեցին։

Պետրոգրադում և ամբողջ երկրում հոկտեմբերյան զինված ապստամբությունը կազմակերպելու գործում ակտիվ մասնակցություն ունեցան Ստեփան Շահումյանը, Ալեքսանդր Մյասնիկյանը, Սուրեն Մարտիրոսյանը (Ավանեսովը), Միքայել Տեր-Հարությունյանցը և ուրիշներ։ Ստեփան Շահումյանը 1917 թ. հունիսին ժամանեց Պետրոգրադ, մասնակցեց սովետների Համառուսաստանյան I համագումարին, իսկ սեպտեմբերին կրկին Պետրոգրադում էր և մասնակցում էր բոլշևիկների կենտկոմի պատմական նիստերին, որոնք որոշումներ ընդունեցին զինված ապստամբության և իշխանությունը գրավելու մասին։ Ալ. Մյասնիկյանը բոլշևիկների կուսակցության VI համագումարի պատվիրակ էր ընտրվել Մինսկի կազմակերպությունից։ Համագումարում նա զեկուցում տվեց արևմտյան մարզում և ճակատում բոլշևիկների գործունեության, ինչպես նաև զինված ապստամբության նախապատրաստման ուղղությամբ բանակում կուսակցական-քաղաքական աշխատանքի խնդիրների մասին[1]։

Ալ. Մյասնիկյանը խոշոր գործունեություն ծավալեց Բելոռուսիայում, որտեղ նա Կենտգործկոմի նախագահն էր և ապա Բելոռուսիայի կոմպարտիայի Կենտկոմի նախագահը, ինչպես նաև բելոռուսական սովետական կառավարու-

1 *Տե՛ս* Протоколы VI съезда РСДРП(6), М., 1934, *էջ 66—67։*

թյան առաջին ղեկավարը։ Այնուհետև նրան տեսնում ենք արևմտյան ռազմաճակատի հրամանատարի պոստում։ Հետագայում նա փոխարինում է գերագույն գլխավոր հրամանատար Կոիլենկոյին և 1917 թ. դեկտեմբերի հերոսական օրերին աշխատում որպես Սովետական Ռուսաստանի բոլոր բանակների գերագույն գլխավոր հրամանատար[2], 1918 թ. գարնանը՝ Վոլգայի ռազմաճակատի գլխավոր հրամանատար, իսկ 1919 թ.՝ Մոսկվայի պաշտպանության օպերատիվ շտաբի պետ և ՌԿ(բ)Կ Մոսկվայի կոմիտեի քարտուղար[3]։

Սարգիս Բաղդատյանը դեռևս ռեակցիայի տարիներին եղել էր Պետերբուրգի բոլշևիկյան կոմիտեի անդամ։ Հետո նա ձերբակալվել և աքսորվել էր Սիբիր, իսկ փետրվարյան հեղափոխությունից հետո հեռավոր Իրկուտսկից վերադարձավ Պետրոգրադ և շուտով ընտրվեց Պետրոգրադի բոլշևիկյան կոմիտեի քարտուղար[4]։ Մայրաքաղաքի բոլշևիկների ղեկավարներից մեկը լինելով, Բաղդատյանը ակտիվ գործունեություն ծավալեց հոկտեմբերյան մարտերը նախապատրաստելու համար։

Պետրոգրադում զինված ապստամբության նախապատրաստման ղեկավարներից մեկն էլ Միքայել Տեր-Հարությունյանցն էր։ Նա հոկտեմբերի 20-ին նշանակվեց ռազմա-հեղափոխական կոմիտեի կոմիսար Պետրոպավլովսկի բերդում և նրան տրվեց № 1 մանդատը[5]։ Բերդի կոմիսար էր նշանակվել նաև Բլագոնրավովը, որն աշխատում էր Տեր-Հարությունյանցի հետ ձեռք-ձեռքի տված։ Երկու կոմիսարները, հենվելով Պետրոպավլովսկի բերդի կայազորի բոլշևիկյան կազմակերպության վրա, ապահովեցին 100 հազար հրացանի և մեծ քանակությամբ ռազմանյութի բաշխումը Պետրոգրադի բանվորական գվարդիային, զինված ապստամբների գլխավոր ուժին։ Պետրոգրադի ռազմա-հեղափոխական կոմիտեում Ֆ. Ձերժինսկու, Ն. Պոդվոյսկու, Մ. Կեդրովի, Անտոնով-Օվսեենկոյի և ուրիշների հետ միասին ակտիվորեն գործում էին Սուրեն Մարտիրոսյանը (Ավանեսովը), որը համառուսական Կենտգործկոմի ներկայացուցիչն էր, և Լևոն Միքայելի Կարախանյանը (Կարախանը), որը Պետրոգրադի սովետի գործկոմի քարտուղարը լինելով, միաժամանակ հանդիսանում էր ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամ և քարտուղարներից մեկը[6]։

Հոկտեմբերյան զինված ապստամբության պատմությունն վառապանծ էջերից մեկը Ձմեռային պալատի գրոհը և ժամանակավոր կառավարության տապալումն էր։ Ձմեռային պալատի կրավման էպոպեան բանվորների, զինվորների և նավաստիների հեղափոխական սխրագործության ամենավառ արտահայտությունն էր։ Այդ հերոսական սխրանքները կատարողների մեջ ռուս, ուկրաինացի, լատիշ և այլ ժողովուրդների զավակների շարքերում կռվում էին տասնյակ հայ զինվորներ ու գվարդիականներ։ Ահա նրանք, Ձմեռային պալատի գրոհի մասնակիցները՝ Մակար Մարտիրոսյան—դասակի հրամանատար, Տիգրան Ալեքսանյան—գորամասի քաղաշխատող, Լևոն Պիճիկյան—կոմունիստ, սպա, Միրոն Օհանյան—այն գրահապատի վարորդը, որը Լենինին Ֆինլանդա-

---

[2] ЦГВИА, ф. Библиотека, № 2293, л. 1294.

[3] Партархив московского филиала ИМЛ, ф. 3, оп. 1, д. 156, л. 24.

[4] Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ԿԿԱ, ֆ. 124, ց. 1, գ. 224, թ. 5։

[5] Տե՛ս Партархив ленинградского филиала ИМЛ, ф. И-1, св. 51, д. 511, л. 4.

[6] Տե՛ս Петроградский Военно-Революционный комитет. Документы и материалы, т. I, М., 1966, էջ 199, 231, 251։

կան կայարանից տարավ Կշեսինսկայայի պալատը, Ալեքսանդր Վերմիշև—բանաստեղծ, գվարդիական ջոկատի կոմիսար, Գրիգոր Խաչանյան—զինվորական, սովետների II համագումարի պատգամավոր, Սիսակ Բարախանյան—վաշտի հրամանատար, կոմունիստ, որն իր վաշտով մասնակցել էր Նիկոլայ Երկրորդի և նրա ընտանիքի ձերբակալմանը, Սարդիս Սրապիոնյան (Լուկաշին)—սակրավորների գումարտակի կոմիսար, և տասնյակ ուրիշ գվարդիականներ, շարքային զինվորներ, հրամանատարներ։ Ձմեռային պալատի գրավման հերոսամարտին ակտիվ աջակցություն էին ցույց տալիս բալթիական նավատորմի հեղափոխական նավաստիները, որոնց շարքում էին հայ ծովային սպաներ Հովհաննես Տեր-Իսահակյանը (ՍՍՀՄ նավատորմի ծովակալ Ի. Ս. Իսակով), Ալեքսանդր Գարսևը և ուրիշներ։

Հայ ժողովրդի ներկայացուցիչները ակտիվ մասնակցություն ունեցան սովետների համառուսաստանյան II համագումարին, որը հանդիսացավ սովետական իշխանության հիմնադիր համագումարը և ընտրեց պրոլետարիատի դիկտատուրայի առաջին օրգանները՝ համառուսական Կենտգործկոմ և Ժողովրդական կոմիսարների սովետ[7]։ Հայաստանի զավակներին կարելի էր տեսնել նաև սովետների III համագումարում և հետագա համագումարներում, որոնք վերջնականապես ամրապնդեցին աշխատավորների հաղթանակը տապալված բուրժուական կարգերի նկատմամբ, դրեցին սովետական սոցիալիստական նոր հասարակարգի հիմքերը։ Այդ համագումարներում ընտրված համառուսական Կենտգործկոմի անդամներից էին Ստ. Շահումյանը, Ալ. Մյասնիկյանը (որը նաև Կենտգործկոմի նախագահության անդամ էր), Սուրեն Մարտիրոսյանը (Ավանեսովը), Վաղարշակ Տեր-Վահանյանը, Լևոն Կարախանը, Վահան Տերյանը, Պոռշ Պոռշյանը և ուրիշներ։

Հայ ականավոր գրող Պերճ Պոռշյանի որդին՝ Պոռշ Պոռշյանը, լինելով ձախ էսեռների ղեկավարներից մեկը, Հոկտեմբերյան հեղափոխության օրհասական պահերին պայքար ծավալեց աջ էսեռների պարագլուխներ Կերենսկու, Զեռնովի և մյուսների դեմ, վճռականորեն անցավ Լենինի կողմը, մասնակցեց Ձմեռային պալատի գրավմանը։ 1917 թ. դեկտեմբերին Պոռշ Պոռշյանը մտցվեց սովետական կառավարության մեջ և նշանակվեց փոստի ու հեռագրի ժողկոմ. նոյեմբերի 19-ին Կենտգործկոմում ստեղծվեց «ազգային հարցի գծով բաժին», որի ղեկավար հաստատվեց Պոռշյանը[8]։

1918 թ. հունվարի 15-ին Ժողկոմսովետը հաստատեց սովետական պետության զինված ուժեր՝ կարմիր բանակ կազմակերպելու մասին պատմական դեկրետը, որը Ժողկոմսովետի նախագահ Լենինի հետ միասին ստորագրեցին նաև կառավարության անդամներ Կոիլենկոն, Պոդվոյսկին, Պոռշյանը, Անտոնով-Օվսեենկոն և ուրիշներ[9]։ Մարտի սկզբներին ստեղծվեց Բարձրագույն ռազմական խորհուրդ, որի զինվորական ղեկավար հաստատվեց Մ. Ռ. Բոնչ-Բրուևիչը, իսկ Լենինի ստորագրած որոշմամբ Բարձրագույն ռազմական խորհրդի քաղաքական կոմիսարներ հաստատվեցին Պոռշ Պոռշյանը և Կ. Ի. Շուտկոն[10]։ Բրեստի հաշտության հետ չհամաձայնվելով, Պոռշյանը հուլիսին դուրս

---

7 Տե՛ս Второй всероссийский съезд Советов, М., 1918, էջ 91, 111, 112 և հտ.։

8 ЦГАОР СССР, ф. 1235, оп. 17, д. 6, л. 1.

9 ЦПА ИМЛ, ф. 2, Ժողկոմսովետի 1918 թ. հունվարի 15-ի դեկրետը։

10 «Известия ВЦИК», 1918, 5 մարտի։

եկավ կառավարության կազմից և հեռացավ քաղաքական գործունեության ասպարեզից։ 1918 թ. դեկտեմբերին Պոռշյանը վախճանվեց։

Լենինը գրեց «Ընկեր Պոռշյանի հիշատակին» հատուկ հոդված, որի մեջ բարձր է գնահատել նրա ծառայությունները հեղափոխությանն ու սովետական իշխանությանը, ինչպես նաև նշել է նրա մոլորություններն ու սխալները։ «Ինձ վիճակվեց ընկեր Պոռշյանի հետ ծանոթանալ և նրան գնահատել Ժողկոմսովետում կատարած համատեղ աշխատանքի ժամանակ, երբ ձախ էսեռներն ընթանում էին մեզ հետ դաշնակցած,—գրել է Լենինը,—Պոռշյանը անմիջապես աչքի էր ընկնում հեղափոխության և սոցիալիզմի նկատմամբ խոր նվիրվածությամբ։ Բոլոր ձախ էսեռների մասին չէ, որ կարելի էր ասել, թե նրանք սոցիալիստներ են, նույնիսկ, թերևս նրանց մեծամասնության մասին այդ չէր կարելի ասել։ Բայց Պոռշյանի մասին այդ պետք էր ասել, որովհետև չնայած նրա հավատարմությանը ռուս նարոդնիկների գաղափարախոսությանը, ոչ-սոցիալիստական գաղափարախոսությանը, ի դեմս Պոռշյանի, երևում էր խորապես համոզված սոցիալիստը...»[11]։ Նույն տեղում Լենինն ավելացնում է, թե «Պոռշյանի մերձեցումը կոմունիզմին անխուսափելի կլիներ, եթե այդ մերձեցմանը չխանգարեր վաղաժամ մահը»։

Հոկտեմբերյան հեղափոխության երկրորդ գլխավոր օջախը Մոսկվան էր, որտեղ մեկ շաբաթ (հոկտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 2-ը) թեժ մարտեր մղվեցին մի կողմից հեղափոխական զինվորների ու կարմիր գվարդիայի, իսկ մյուս կողմից՝ հին կարգերի կողմնակիցների միջև։ Մոսկվայում տեղի ունեցած հոկտեմբերյան մարտերում հայ ժողովրդի տասնյակ լավագույն զավակներ էին մասնակցում։ Ամենից առաջ հարկ է նշել Պետրոս Հարությունյանցին, որը Զամոսկվորեցկի շրջանի կարմիր գվարդիայի պետն էր և հմտորեն ղեկավարեց գրոհը օկրուգային դինվորական շտաբի վրա, ինչպես նաև մասնակցեց Կրեմլում ծվարած սպիտակգվարդիականների ջախջախման գործողություններին։ Պետրոս Հարությունյանցի հետ միասին Զամոսկվորեցկի շրջանի հեղափոխական իրադարձություններին մասնակցում էին Ռուբեն Արգարյանը, Արտեմի Խալաթովը, եղբայրներ Պարույր և Վաղարշակ Տեր-Գրիգորյանները[12], Հայկանուշ Նաջարյանը, Զամոսկվորեցկի շրջկոմի կուսակցական կազմակերպիչ Վ. Տեր-Վահանյանը[13] և ուրիշներ։ Այդ մարտերում հերոսացավ հայ ժողովրդի անվեհեր դուստր, քսանամյա Լուսիկ Լիսինյանը, որը ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ, պրոֆեսոր Շտերնբերգից ստացած մի մարտական առաջադրանք կատարելիս զոհվեց մարտում և հողին հանձնվեց Կրեմլի պատի մոտ, Կարմիր հրապարակի եղբայրական գերեզմանում։ Մոսկվայում հոկտեմբերյան զինված ապստամբության ղեկավար գործիչներից էր նաև Ռուբեն Քաթանյանը, որը Մոսկվայի կոմիտեի անդամ էր. «Известия московского совета», այնուհետև «Известия Военно-революционного комитета», և ապա «Вечерние известия» թերթերի խմբագիրներից մեկը, որն այդ թերթերում տպել է բազմաթիվ հոդվածներ հեղափոխական պայքարի պանազան հարցերի մասին։ Հետագայում Ռուբեն Քաթանյանն աշխատում էր կարմիր բանակի գլխավոր քաղվարչության պետի և ապա ՌԿ(բ)Կ կենտկոմի

---

[11] В. И. Ленин, Полное собр. соч., т. 37, էջ 384—385։

[12] Октябрь в Замоскворечье. М., 1957, էջ 36, 45, 67, 344 և հտ.։

[13] Академик К. В. Островитянов, Думы о прошлом, М., 1967, էջ 156—157։

ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչի պատասխանատու պոստերում, ազնվորեն և պատվով կատարելով ականավոր հեղափոխականի իր պարտականությունները[14]։

Հոկտեմբերյան հեղափոխության օրերին Բելոռուսիայում էր աշխատում Հովհաննես Ալիբեգյանը, որը 1917 թ. վերջերին ՌԿ(բ)Կ Մինսկի կոմիտեի նախագահն էր, Բելոռուսիայի հեղկոմի նախագահի տեղակալը, իսկ գերմանական օկուպացիայի ժամանակ՝ ընդհատակյա մարզկոմի քարտուղարը, հետո արևմտյան մարզի ռազմական կոմիսարը։ Նա է զեկուցագիր ներկայացրել Լենինին արևմտյան մարզում տեղի ունեցած իրադարձությունների մասին[15]։

Հեղափոխության հաղթանակի համար մղված մարտերի հերոսական մասնակիցներից էին նաև Հայկ Բժշկյանը՝ փառապանծ Գայը, որն ազգային-ազատագրական շարժման հերոսից, որպիսին էր նա մինչև Հոկտեմբերը, աճեց և դարձավ Հոկտեմբերի հերոս, սովետական դիվիզիայի, կորպուսի և բանակի հրամանատար, Լենինյան դպրոցի զորավարներից մեկը, Գասպար Ոսկանյանը, որը 25-րդ լեգենդար դիվիզիայի առաջին կազմակերպողն էր, այնուհետև՝ 4-րդ բանակի հրամանատարը արևելյան Հակատում և ապա 12-րդ բանակի հրամանատարը հարավ-արևմտյան ճակատում, Գրիգոր Խախանյանը, որը կարմիր բանակի միավորման հրամանատարն ու զինկոմն էր և իր զորամասով մասնակցեց Կոլչակի ուժերի ջախջախմանն ու Օմսկի ազատագրմանը։ Այդ զորավարների և շատ ուրիշ նշանավոր հայ հեղափոխականների ու զորահրամանատարների գործունեությունը լուսաբանված է գրականության մեջ։

Հոկտեմբերյան հեղափոխությունը լայն արձագանքներ առաջ բերեց նաև բուն Հայաստանում ապրող աշխատավորների մեջ։ 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբներին Հայաստանի մի շարք շրջաններում կոմունիստների գլխավորած սովետները փորձեցին իշխանությունը վերցնել իրենց ձեռքը, իրագործել Լենինյան դեկրետներով հայ ժողովրդին տրված ինքնորոշման իրավունքը։ 1917 թ. դեկտեմբերից ձեռնարկվեց Հայաստանի կոմունիստական կուսակցություն կազմակերպելու գործը և հայկական վինված ուժերի համախմբումը[16]։ 1918 թ. մարտի 4-ին մամուլում հրապարակվեց Հայաստանի կոմունիստական կուսակցություն ստեղծելու մասին մանիֆեստը[17]։ Այդ պատմական փաստաթղթում շարադրված են այն խնդիրները, որոնք ելնում էին Հայաստանի մասին Լենինյան դեկրետներից։ Պայքար ծավալվեց Հայաստանի արևմտյան և արևելյան մասերը միավորելու և մեկ միասնական Հայկական սովետական հանրապետություն ստեղծելու համար։ Սակայն 1918 թ. գարնանից թուրքական և գերմանական զավթիչները նենգորեն խախտեցին Բրեստի հաշտության պայմանագիրը, ներխուժեցին Հայաստան ու Անդրկովկաս և խանգարեցին հայ ժողովրդին իրագործելու իր ինքնորոշման և Հայկական սովետական հանրապետություն ստեղծելու ծրագիրը։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կարմիրգվարդիական ջոկատների մեծ մասը կենտրոնացան Հյուսիսային Կովկասում և Սովետական

---

14 ЦПА ИМЛ, ф. 17, оп. 60, д. 1, л. 28, 52, дело 15, л. 96 և հտ.։

15 Партархив белорусского филиала ИМЛ, ф. 35, оп. 1, д. 44.

16 ЦПА ИМЛ, ф. 17, оп. 4, д. 19, л. 2.

17 Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության օրգան «Կարմիր օրեր» թերթը, 1918, 4 մարտի։

Ռուսաստանի ուրիշ երկրամասերում, որտեղ ծավալեցին իրենց գործունեությունը Ռուսաստանի կոմունիստական կուսակցության շարքերում և կարմիր բանակում։ Հյուսիսային Կովկաս և սովետական Բաքու փոխադրվեցին նաև ՌԿ(բ)Կ կովկասյան երկրային կոմիտեի անդամները, որտեղ նրանք շարունակում էին իրենց հեղափոխական աշխատանքը։

Ռուսաստանի հարավային նահանգներում ապաստան գտած հայ ժողովրդի հազարավոր զավակներ ամբողջովին ելվիրվեցին Հոկտեմբերի գաղափարների հաղթանակի համար ծավալված պայքարին։ Սպիտակգվարդիականության և օտարերկրյա զավթիչների դեմ անձնվիրաբար մարտնչող կոմունիստների շարքերում էին նաև հայ ժողովրդի զավակները։ 1919 թ. մարտին Սովետական Ռուսաստանի նահանգներում, հատկապես հարավում, հաշվվում էր 10 հազար հայ կոմունիստների մի ջոկատ, որն իր պատգամավորներն էր ուղարկել ՌԿ(բ)Կ VIII համագումարին[18]։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ հայկական սեկցիաներ էին ստեղծվել Դոնի-Ռոստովի, Եկատերինոդարի, Արմավիրի, Պյատիգորսկի, Աստրախանի, Սարատովի, Սիմֆերոպոլի և ուրիշ կուսակցական կոմիտեներին կից, որոնք հատուկ աշխատանք էին կատարում հայ բնակչության մեջ, համախմբում էին նրա ուժերը, օժանդակում կարմիր բանակի համալրմանը։ 1918—1920 թթ. Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, հայկական կոմիսարիատը և ՌԿ(բ)Կ կոմիտեներին կից հայկական սեկցիաները Մոսկվայում, Ռոստովում, Աստրախանում, Սիմֆերոպոլում և Սովետական Ռուսաստանի այլ քաղաքներում հրատարակել են 19 հայերեն թերթեր[19], որոնց էջերը լեցուն են Հոկտեմբերյան դեկրետներով, Լենինի ճառերով ու հոդվածներով, սովետական իշխանության հաղթանակի համար պայքարի կոչերով։ Այդ նույն ժամանակամիջոցում հայերեն հրատարակվել են Լենինի 61 աշխատություններ, ինչպես նաև տասնյակ ուրիշ գրքեր և հարյուրավոր կոչեր ու թերթիկներ, որոնք հայ աշխատավորների մեջ տարածում էին Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարները։

Հայ աշխատավորներին Հոկտեմբերյան հեղափոխության դրոշի շուրջը համախմբելու ուղղությամբ Հայաստանի կոմունիստական կուսակցության և հայկական գործերի կոմիսարիատի եռանդուն գործունեությունը տվեց իր դրական արդյունքները։ Հայ ժողովրդի այն հատվածները, որ գաղթել էին Ռուսաստան հին ժամանակներում կամ 1914—1918 թթ., կանգնեցին սովետների դրոշի տակ։

1918 թ. մարտի 16-ին Սովետական Ռուսաստանի կառավարությունը մամուլում հրապարակում է հետևյալ հրահանգը.

«Բոլոր հեղափոխական կոմիտեներին, հեղափոխական շտաբներին, սովետներին և այլ հիմնարկներին.

Սրանով հայտնվում է ի գիտություն, որ հայկական հեղափոխական կազմակերպությունները իրավունք ունեն ազատ կերպով կազմակերպելու հայկական կամավորական ջոկատներ և վերջիններիս ֆինանսավորելու նպատակով՝ հարկման ենթարկելու հայկական բուրժուազիային։ Հիշյալ սովետական

---

18 Восьмой съезд РКП(б), протоколы, М., 1959, էջ 472, 457։

19 Տե՛ս Ս. Սարգսյան, Հայկական մամուլը Սովետական Ռուսաստանում (1918—1920 թթ.), թեկնածուական դիսերտացիա, Երևանի պետ. համալսարանի գրադարան։

հիմնարկությունների վրա պարտականություն է դրվում արգելք չհանդիսանալ այդ ջոկատների առաջշարժմանը դեպի Հայաստան, ջոկատներ, որոնք կոչված են իրենց հայրենիքը պաշտպանել գերմանս-թուրքական բռնադատիչներից»[20]։

Այդ դիրեկտիվի հիման վրա լայն շարժում սկսվեց հայերի մեջ՝ մարտական զինված ջոկատների մեջ մտնելու համար։

Հայկական կամավորական ջոկատների կազմակերպումը լայնորեն ծավալվում է Հարավային Ռուսաստանի բոլոր սովետական շրջաններում, Ուկրաինայում, Ղրիմում։ Այդ ջոկատներն սկզբից ձևավորվում էին Ռուսաստանի կարմիր բանակի զորամասերից անկախ, ինքնուրույն կերպով, ենթարկվում էին միայն Հայաստանի կոմունիստական կուսակցության և հայկական կոմիսարիատի ներկայացուցիչներին, պատրաստվում էին Հայաստան մեկնելու համար։ Ջոկատները համալրվում էին հիմնականում Ռուսաստանում գտնվող արևմտահայ փախստականներից, ինչպես նաև արևելահայերից։ Հայ կամավորներին հաճախ միանում էին ռուս և ուկրաինացի զինվորներ։ Հայկական թերթերի ճակատներին հաճախ տպվում էր «Կեցցե Հայաստանի կոմունիստական կարմիր բանակը» լոզունգը։

Թուրքական և գերմանական օկուպանտների ներխուժումը Անդրկովկաս փոխեց իրավիճակը և արդելակեց հայկական կարմիր ջոկատների շարժումը դեպի Անդրկովկաս։ Դեպի Հայաստան ուղևորվող հայկական կամավորական ջոկատները կես ճանապարհին վերակազմվեցին։ Նրանց մի մասը ցրվեց, և զինվորները մեկնեցին իրենց տները, մի քանի հարյուր կամավորներ Թիֆլիսում միացան Անդրանիկի ջոկատին, ոմանք մտան Հայաստանի Հանրապետության բանակի շարքերը, իսկ կամավորների մեծ մասը անցավ Հյուսիսային Կովկաս։ Այստեղ ՀԿԿ Կենտկոմի և ՌՍՖՍՀ ազգությունների գործերի ժողկոմատի հայկական կոմիսարիատի լիազորների նախաձեռնությամբ հայկական կամավորական այդ ջոկատները միավորվում են մեկ հատուկ զորամասի մեջ։ Հայ աշխատավորներին ուղղված կոչերի մեջ բացատրվում է ստեղծված իրադրությունը և հայկական կարմիր զորք կազմակերպելու անհրաժեշտությունը. «Կարմիր օրեր» թերթը, որը հրատարակվում էր արդեն Պյատիգորսկում, 1918 թ. հունիսից քաջալերում էր հայկական զորաբանակի ստեղծումը։ «Կեցցե Հայաստանի կոմունիստական կարմիր բանակը» լոզունգը չէր իջնում թերթի էջերից։ Այդ ոգով էին գրվում խմբագրական հոդվածները և մյուս նյութերը։ «Բանվորներ, զինվորներ, գյուղացիներ—կարդում ենք «Կարմիր օրեր»-ի մի դիմումի մեջ. Ռուսաստանի հոկտեմբերյան մեծ հեղափոխության ալիքները ծավալվում են Անդրկովկասում։ Կարմիր բանակը տվել է ազդանշանը... Հակահեղափոխության բոլոր մութ ուժերը համախմբվեցին և կատաղի կռիվ են մղում։ Այդ մութ ուժերին օգնության են գալիս թուրքական ֆեոդալիզմի արյունարբու հորդաները։ Հասել է ժամը...»։ Մի ուրիշ կոչում գրված է, որ «տեղահան ու թափառական հայ բանվորությունն ու գյուղացիությունը գոնե Հյուսիսային Կովկասում պետք է ըմբռնեն մոմենտի լրջությունը, ստեղծեն իրենց հայկական կարմիր զորամասը և այդպիսով պաշտպան հանդիսանան իրենց շահերին»[21]։

---

20 ЦПА ИМЛ, ф. 3, оп. 1, д. 129, л. 1; *Տե՛ս նաև* «Кубанская Правда», 1918, № 57.

21 «Կարմիր օրեր», 1918, 3 նոյեմբերի։

Հյուսիսային Կովկասում գործող կոմունիստներ Գևորգ Աթարբեկյանի, Շավարշ Ամիրխանյանի, Գուրգեն Հայկունու, Թադևոս Մանդալյանի, Արամ Շահգելդյանի և ուրիշների ղեկավարությամբ 1918 թ. ամռան հայկական մի բանի անջատ կամավորական ջոկատներ միավորվեցին և կազմավորվեց հայկական գունդ, որը շուտով կոչվեց Լենինի անունով[22]։ Գնդի հրամանատար նշանակվեց հին, փորձված զինվորական Թագվոր Մակիչյանը։ Հայկական կարմիր բանակային գունդը դարձավ Սովետական Ռուսաստանի կարմիր բանակի բաղկացուցիչ մասը և մարտի մեջ մտավ ընդդեմ դենիկինյան բանդաների։ Հայ զինվորներից կազմված առանձին վաշտեր և դիվիզիաներ ստեղծվեցին նաև կարմիր բանակի ուրիշ գնդերում, իսկ շատ հայ ռազմիկներ էլ համալրեցին կարմիր բանակի ինտերնացիոնալ զորամասերը։

Հայ կարմիրգվարդիականները ջոկատները մարտական շատ գործեր են կատարել նաև Ղրիմում, Միջին Ասիայում և այլ երկրամասերում։ Թուրքեստանյան երկրամասում հակասովետական բանակների, մասնավորապես էնվեր փաշայի գլխավորած բասմաչական բանդաների դեմ մղված մարտերում աչքի ընկան հեծյալ միավորման հրամանատար Հակոբ Մելքումյանը, միավորման հետախուզության կազմակերպիչ Գեորգի Սարուխանյանը, զորամասի հրամանատար Ալեքսանդր Տոնիյանը և բազմաթիվ ուրիշ գործիչներ, որոնք ռուսների և տեղական ազգությունների զավակների հետ եղբայրությամբ զոդված գնում էին դեպի մարտ, անտեսում վտանգը, մասնակցում Հոկտեմբերի նվաճումների պաշտպանությանը։ Այդ մարտերում աչքի ընկնելու համար Հակոբ Մելքումյանը երկու անգամ պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[23]։

Հայ զինվորներ կային նաև կարմիր բանակի շատ այլ զորամասերում և միավորումներում։ Նրանք Հոկտեմբերի դրոշի տակ կռվում էին բոլոր ռազմաճակատներում։ Կենտրոնական արխիվների նյութերը և կարմիր բանակի զորամասերի անձնակազմի ցուցակների տվյալները վկայում են, որ 1918—1920 թթ. Սովետական Ռուսաստանի կարմիր բանակի զորքերի անձնակազմում ծառայել են ոչ պակաս, քան 25 հազար հայ զինվորներ, որոնք անձնվիրաբար կռվում էին Հոկտեմբերի գաղափարների լիակատար հաղթանակի համար։

Անհրաժեշտ է ընդգծել նաև այն իրողությունը, որ սպիտակգվարդիական բանակների կազմում չի ձևավորվել հայկական ոչ մի ստորաբաժանում, հակասովետական այդ բանակների կազմում չեն եղել շատ թե քիչ աչքի ընկած ռազմական կամ քաղաքական հայ գործիչներ։ Սպիտակգվարդիականների լագերում մեսրոպատառ հայերենով չի հրատարակվել ոչ մի թերթ ու դիրք։

Այսպիսով, հայ ժողովուրդը Հոկտեմբերյան հեղափոխությունն ընդունեց որպես իրեն ազատագրություն բերող, իրեն փրկող, իր վաղեմի բաղձանքներն իրագործող հեղափոխություն։ Իր հայրենի երկրում, թե լայնածավալ Ռուսաստանի այլ մասերում հայ աշխատավոր մարդը սմենուրեք միացավ Հոկտեմբերյան հեղափոխության բանակներին, ոգեշնչված գնաց պայքարի՝ հանուն սովետական կարգերի հաստատման ու ամրապնդման։

Այդ հաղթանակն իր ալիքները տարածեց նաև Հայաստանում, ուր 1920 թ. ստեղծվեց Հայկական Սովետական Հանրապետություն, հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրման օջախը, նրա վերածննդի հենարանը։

---

22 Տե՛ս «Правда», 1919, 11 մարտի։

23 ЦГАСА, Приказ РВС, № 82, от 31 марта 1924.